«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-Ռուսական համալսարանի գիտական գծով

Պրոռեկտոր ի.գ.դ, պրոֆեսոր Պ. Ս. Ավետիսյան

_____ «26» հունիսի 2023թ.

ԿԱՐԾԻՔ

Հայ-Ռուսական համալսարանի
(առաջատար կազմակերպության)

Նորայր Արտաշի Ավագյանի «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների չափորոշիչները» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Նորայր Արտաշի Ավագյանի (այսուհետ՝ Հեղինակ) Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների չափորոշիչները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը (այսուհետ՝ ատենախոսություն) քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնում՝ ամբիոնի վարիչ ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Ղամբարյանի, ի.գ.թ. Կ.Զարիկյանի, ի.գ.թ. Թ. Շաքարյանի, ի.գ.թ.

դոցենտ Լ.Գ. Դալլաքյանի, ի.գ.թ. դոցենտ Ա.Մ. Փխրիկյանի, ի.գ.թ. դոցենտ Ռ.Գ. Խանդանյանի մասնակցությամբ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ոչ միայն ընտրված հիմնահարցերի հրատապությամբ և դրանց գիտական նշանակությամբ, այլև իրավակիրառ գործընթացի բարելավման անհրաժեշտությամբ:

Հեղինակի ներկայացրած փաստարկները ատենախոսության թեմայի արդիականության վերաբերյալ օբյեկտիվ և համոզիչ են, բարձրացված են այնպիսի իրավական խնդիրներ, որոնց գիտականորեն պատշաճ հետազոտելը և արդյունքները գործնականում կիրառելը ունեն որոշակի հրատապություն: Ատենախոսության մեջ առանձնացված որոշ հիմնախնդիրներ ներկայումս իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում են լրջագույն. համակարգային խնդիրների թե՛ անձանց, թե՛ հանրային իշխանության համար: Վերջինիս վառ օրինակ է հեղինակի կողմից առանձնացված վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ներկայումս կիրառում ունեցող ընթացակարգային ու կառուցակարգային անարդյունավետ մոդելը:

Հետազոտության առարկան կազմող ընտրված հարցերն ունեն ինքնատիպ գիտական նշանակություն՝ տվյալ ոլորտում եղած գիտական աշխատությունների, դատական պրակտիկայում և իրավաստեղծ ոլորտում ձևավորված ավանդույթների և գործող օրենսդրության դրույթների կիրառման նպատակով գիտական անհրաժեշտ եզրահանգումներ կատարելու համար, ուստի ատենախոսության հետազոտության առարկան կազմող հարցերի առնչությամբ կատարված վերլուծությունները, եզրահանգումներն ու առաջարկները կարող են էական նշանակություն ունենալ թե՛ իրավական գործընթացների ուսումնասիրության հարցում՝ ընդհանրապես, թե՛ վարչական գործընթացների և վարչական վարույթի ուսումնասիրության հարցում՝ մասնավորապես, ավելին՝ հետազոտության առարկան կազմող հարցերի վերաբերյալ կատարված վերլուծությունները, եզրահանգումներն ու առաջարկները կարող են հիմք հանդիսանալ վարչական վարույթը կարգավորող օրենսդրության հետագա կատարելագործման նպատակով իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացների համար:

Հարկ է նկատել, որ Հեղինակի կողմից պաշտպանության ներկայացրած դրույթները ոչ թե իրենցից ներկայացնում են գործող օրենսդրական ակտերում որոշակի փոփոխություններ կատարելու առաջարկներ, այլ բանաձևում են հետազոտության առարկան կազմող հարաբերություններում իրավաստեղծ ու իրավակիրառ գործունեության սահմանները:

Հեղինակն ուսումնասիրել է ընտրված հարցերին անմիջականորեն վերաբերող անհրաժեշտ մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող իրավակիրառական նյութերը, դատական ակտերը, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերը, ինչը հնարավորություն է տվել հեղինակին առավելագույնս համալիր անդրադառնալու խնդրո առարկա հարցադրումների առնչությամբ ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան իրավագետների դիրքորոշումներին, առանձնացնելու առավել հիմնավորված, փաստարկված մոտեցումները և դրանց համակողմանի վերլուծության արդյունքներով առաջադրել համարժեք եզրահանգումներ:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, այն հնարավորություն է տվել նախապատվելի համամասնությամբ անդրադառնալու առավել ընդհանուր հարցադրումների քննարկմանը:

Ատենախոսությունում Հեղինակը ցուցաբերել է ինքնուրույն հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և գործնական նյութերից հավուր պատշաճի օգտվելու և ինքնուրույն եզրահանգումներ առաջադրելու կարողություններ:

Հեղինակի կողմից ատենախոսության հիմնադրույթները համարժեք արտացոլված են ՀՀ ԲՈՀ-ի կողմից սահմանված գիտական հանդեսներում տպագրված թվով 9 գիտական հոդվածներում և ատենախոսության սեղմագրում:

Աշխատանքը, հիմնականում, գրված է գրական պատշաճ լեզվաոճով, այն գրեթե զերծ է թերի, բազմիմաստ ու խրթին մտքերից, լեզվական ու քերականական կանոնների շեղումներից, սակավաթիվ են նաև վրիպակները:

Ատենախոսության ձևավորումը համապատասխանում է ԲՈՀ-ի կողմից սահմանված կանոններին: Այդ կանոններին համապատասխանում են նաև աշխատության կառուցվածքը և ծավալը, ինչպես նաև սեղմագիրը:

Միաժամանակ, ատենախոսության առնչությամբ մեր նկատառումները ներկայացված են սպորև:

1. Ատենախոսությունում առաջադրված եզրահանգումները, ինչ խոսք, ունեն գործնական ուղղվածություն, դրանք նաև ուղեկցվել են տեսական հիմնավորումներով, սակայն աշխատանքն էլ ավելի շահեկան կլիներ, եթե աշխատանքում վեր հանված խնդիրների համատեքստում Հեղինակը չսահմանափակվեր միայն դրանց արձանագրումով, այլ նաև համապատասխան վերլուծություններ կատարելով հանդես գար այդ խնդիրների լուծման գիտագործնական առաջարկություններով:

Այսպես, ատենախոսության առաջին գլխում Հեղինակը նախ առաջին պարագրաֆում ներկայացրել է վարչական վարույթը կարգավորող սահմանադրական և միջազգային իրավական հիմքերը, իսկ երկրորդում՝ վարչական վարույթը կարգավորող ներպետական օրենսդրության էվոլյուցիան, բանաձևելով ներկայիս փուլային խնդիրները՝ 1) վարչական վարույթը կարգավորող օրենսդրության ոլորտում սահմանադրական և միջազգային իրավական հիմնադրույթներին համապատասխանող արդյունավետ իրավական միջոցների, մեխանիզմների համալրումը, 2) պետական մարմինների կողմից անհրաժեշտ կամքի ու ջանասիրության դրսևորումը, որպեսզի արդեն իսկ նախատեսված իրավական միջոցները կիրառվեն դրանց նպատակին համապատասխան /տե՛ս էջ 58/: Կամ, ատենախոսության մեջ նշել է, որ «առանձին տեսակի վարչական վարույթներում առանձնահատկությունների ներդրման տեսանկյունից վարչարարության արդյունավետությունը և անձանց իրավական պաշտպանությունը, ոչ միայն հանդես են գալիս չափորոշիչների դերում, այլ նաև այդ երկու հիմնաքարային սկզբունքները միմյանց հակակշռող և զսպող գործոնների դեր են խաղում» /էջ 67-68/, որից հետո արձանագրել է, որ «հանրային իշխանության գործառույթների արդյունավետ իրականացման համար առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների սահմանման և այդ հարաբերություններում մասնավոր անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ կառուցակարգերի առկայության միջև ողջամիտ հավասարակշռության հաստատումը վարչական իրավունքի գիտության առանցքային հարցերից մեկն է»

/էջ 68/: Ինչպես տեսնում ենք Հեղինակը ներկայացնելով հիմնախնդիրները չի ներկայացրել իր դիտանկյունից հանգուցալուծման հնարավոր գիտագործնական ուղիները:

2. Ամբողջ ատենախոսության մեջ հեղինակը շեշտադրում է առանձին տեսակի վարչական վարույթների իրավաստեղծ և իրավակիրառ հարցերում ընդհանուր հայեցակարգի բացակայության մասին, դրանց հիմնախնդիրների մասին, ինչը ողջունելի է, սակայն հեղինակի դատողությունները առավել համոզիչ և փաստարկված կլինեին, եթե հիմնավոր վերլուծություններով ներկայացներ, գոնե մեկ առանձին տեսակի վարույթի իրավական հիմքերի, գործնական խնդիրներ առաջացնող իրավանորմերի հետազոտություն: Մասնավորապես, վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը որպես առանձին տեսակի վարույթը կարգավորող Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում առկա են բազմաթիվ հակասական մեկնաբանությունների տեղիք տվող իրավական կարգավորումներ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման համատեքստում, իսկ այս խիստ ընդհանրական խմբագրությամբ նորմը հենց գիտական և գործնական հարթության վրա տեղիք է տվել անհարկի հակասական մոտեցումների՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ:

Աշխատանքն էլ ավելի շահեկան կլիներ, եթե աշխատանքում վեր հանված խնդիրների համատեքստում Հեղինակը անդրադառնար նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթին կամ կամ այլ առանձին տեսակի վարչական վարույթին՝ որպես առանձին տեսակի վարույթի:

Ավելին՝ Հեղինակը կարող էր անդրադառնալ նաև առանձին տեսակի վարույթի առանձնահատկություններ սահմանելու դեպքում գործող օրենսդրության կարգավորման միասնական մոտեցման բացակայության հարցին, այն համատեքստում, որ օրինակ՝ **առանձնահատկություն սահմանող դրույթը կարող է լրիվ հակառակ տրամաբանությամբ կարգավորել նույն իրադրությունից բխող կոնկրետ իրավահարաբերությունները, թե հենց այդ կարգավորմամբ է վերջինս դիտարկվում որպես առանձնահատկություն:**

3. Հեղինակը ատենախոսության երրորդ գլխի չորրորդ պարագրաֆում /էջ 144-158/ կատարել է արձանագրում առ այն, որ տարբերակման են ենթակա ընդհանուր իրավասության և մասնագիտացված /գործառութավորված/ վարչական վարույթները, սակայն հեղինակի կողմից հավուր պատշաճի հետևողականությամբ չի բնորոշվել մասնագիտացված /գործառութավորված/ վարչական վարույթ եզրույթը, ընդ որում՝ մասնագիտացված և գործառութավորված հասկացություններից յուրաքանչյուրն առանձին կարող են տարբեր բովանդակություն հաղորդել կիրառված եզրույթին:

4. Ինչ վերաբերում է պաշտպանության դրույթներին, ապա հարկ է ընդգծել, որ որոշ տեսակի վարչական վարույթներն ընդհանուրից առանձնացնելը և հատուկ կարգավորելը բխում է ինչպես վարչարարության, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետությունից: Եթե վարչական վարույթն ունի այնպիսի առանձնահատկություն, որը տվյալ դեպքում ընդհանուր վարութային կանոնները դարձնում է ոչ կիրառելի, պետք է գործի դրվեն այլ՝ միայն այդ վարույթին ներհատուկ ընթացակարգային գործիքներ: Անշուշտ, ցանկացած վարչական վարույթ ուղղված է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռմանը՝ օրենքների կիրառման համատեքստում: Նույն գործառույթը արդիական է նաև հատուկ վարույթների դեպքում, միայն թե՝ հատուկ ընթացակարգերով:

Ուստի ընդունելի համարելով Հեղինակի այն մոտեցումը, որ հատուկ վարույթները կարևոր են վարչարարության և մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետությունն ապահովելու հարցում, այդուհանդերձ, նշվածը բխում է վարչարարության գործառույթներից, ուստի այդ ասպեկտով հետազոտությունը ևս պետք է համալիր կատարվեր և առնչություն ունենար նշված հարցադրումներին:

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ նկատառումներ՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ***Նորայր Արտաշի Ավագյանի «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների չափորոշիչները»*** վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական

իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը ամբողջական գիտական հետազոտություն է, համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 08-ի N 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» կանոնակարգով թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջներին, վերոհիշյալ նկատառումները նկատելիորեն չեն նսեմացնում հետազոտության արժեքը, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել և հավանության է արժանացել Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 2023թ. հունիսի 26-ի նիստում, արձանագրություն թիվ 3:

Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի և քաղաքականության ինստիտուտի
իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի վարիչ՝

ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Ս. ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
գիտական քարտուղար՝

Ռ.Ս. ԿԱՍԱԲԱԲՈՎԱ